ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2020/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/100, 31.08.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/9» բաց մրցույթ

Գնման առարկան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. ընդունել որոշում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ,
2. ընդունել որոշում ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արարատյան 62/4ա
Հեռ: (+374) 93466777
Էլ.փոստ՝ interevros-argos@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3, 4-րդ հարկ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

- *Բողոքի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից վերջինիս կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

✓ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» բաց մրցույթը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

✓ Վերոհիշյալ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ն և «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն:

✓ *Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.*

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	562 755 705	61 000 000	124 751 141	748 506 846

✓ 26.08.2020թ. ժամը 16:30 հրավիրվել է գների շուրջ միաժամանակյա բանակցություններ:

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնի համար հրավիրված բանակցություններին ներկայացած «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը նշված չափաբաժնի մասով թողել է անփոփոխ, իսկ ներկա գտնվող «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ վերջնական գնային առաջարկը.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	**438 750 000**	48 750 000	97 500 000	585 000 000

✓ Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՐՏԱՐՍ » ՍՊԸ-ն:

✓ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 26.08.2020թ. ընդունվեց պայմանագիր կնքելու մասին որոշում, հայտարարությունը 27.08.2020թ. հրապարակվեց www.gnumner.am կայքում և սահմանվեց անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

- ***Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ **գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից

բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը *և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:* Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հրավերի 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը *և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից.* Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Տվյալ պարագայում, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	*562 755 705*	*61 000 000*	*124 751 141*	*748 506 846*

Գնումների մասին օրենսդրության խախտմամբ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերջնական, վերանայված հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3	«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ	438 750 000	48 750 000	97 500 000	585 000 000

Սույն Ընթացակարգի շրջանակում, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը 3-րդ չափաբաժնի մասով կազմել է *562 755 705* ՀՀ դրամ, սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, **այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից**, որի արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի ինքնարժեքը նվազեցվել է և կազմել է *438 750 000* ՀՀ դրամ՝ նախկին *562 755 705 ՀՀ դրամի* փոխարեն:

Վերոնշյալով պայմանավորված, գտնում ենք, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը, հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարները, իսկ այդ նեազեցված գնային առաջարկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր նշված մասնակիցի ներկայացրած հայտը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ԱՐՏԱՐՄ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կից ներկայացվում՝
1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
2. «ԻՆՏԵՐԵԿՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի տնօրենի անձնագրի պատճեն:
3. «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.08.2020թ. նիստի թիվ 2-5 արձանագրության պատճեն:
4. «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթին՝ «ԱՐՏԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի պատճեն:

Առդիր 6 թերթ:

Հարգանքով՝
«ԻՆՏԵՐԵԿՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի տնօրեն _____

28.08.2020թ.